

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ (CALWORKs) ԵՐԵՒԱՅԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՏԵՍՄԱՆ/ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՆՆԵՐ

CalWORKs-ի երեխայի աջակցության անտեսման/փոխանցման կանոնները փոխվել են:

Հին կանոն.

Եթե Դուք CalWORKs եք ստանում Ձեր երեխայի համար և նաև երեխայի աջակցություն եք ստանում նրանց համար, հիմնականում Դուք ստանում եք մինչև \$50 երեխայի աջակցություն, որը Ձեզ փոխանցվում է Ձեր վարչաշրջանի երեխայի աջակցության տեղական գործակալության (Local Child Support Agency, LCSA) միջոցով, և այդ գումարն անտեսվում կամ չի հաշվարկվում, երբ որոշվում է Ձեր CalWORKs-ի իրավունակությունը և հաշվարկվում է դրամաշնորհի գումարը: Միայն երեխային վերաբերող որոշ դեպքերում երեխայի ամբողջական աջակցությունը փոխանցվում է ընտանիքին, իսկ \$50 անտեսվում է՝ նախքան մնացած գումարը որպես եկամուտ հաշվարկելը:

CalWORKs-ի ընտանիքները, որոնք իրենց երեխայի աջակցությունն ուղղակիորեն ստանում են հնամակալության իրավունք չունեցող ծնողից (Non-custodial Parent, NCP), ստանում են միևնույն անտեսումը՝ նախքան մնացած գումարը հիմնականում կհաշվարկվի որպես եկամուտ:

Նոր կանոններ.

2022թ. հունվարի 1-ից սկսած, կամ երբ այս փոփոխությունները կարող են ծրագրավորվել վարչաշրջանի համակարգչային համակարգում, որը որ ավելի ուշ տեղի ունենա, Ձեզ փոխանցվող (Ձեզ ուղարկվող) և անտեսվող երեխայի աջակցության նոր գումարը կավելանա մինչև \$100՝ աջակցության խմբում (assistance unit, AU) գտնվող և մեկ երեխա ունեցող ընտանիքի համար և մինչև \$200՝ AU-ում գտնվող և երկու կամ ավելի երեխա ունեցող ընտանիքի համար: Երեխայի աջակցության անտեսման այլ կանոններ չեն փոփոխվի:

Երեխայի աջակցություն՝ կանխիկ դրամաշնորհի տարբերակի փոխարեն (SB 380) ծրագրի իրավունակության փոփոխություններ.

Եթե Դուք խորթ կամ միակողմանի արյունակից եղբայր կամ քույր ունեք, ով ներառված չէ Ձեր CalWORKs-ի կանխիկ դրամաշնորհում, քանզի նա երեխայի աջակցություն է ստանում, այդ տարբերակը կարող է փոխվել: Ավելացած անտեսված գումարները կավելացնեն երեխայի աջակցության այն գումարները, որոնք Ձեր երեխան պետք է ստանա յուրաքանչյուր ամիս՝ Ձեր AU-ի կանխիկ դրամաշնորհից բացառվելու համար իրավունակություն ունենալու համար:

Դուք Գործողության ծանուցում կստանաք՝ տեղեկացնելով, թե արդյոք Ձեր խորթ կամ միակողմանի արյունակից քույր կամ եղբայրն այլևս իրավունակ չէ մասնակցելու Երեխայի աջակցություն՝ կանխիկ դրամաշնորհի տարբերակի փոխարեն ծրագրին և երբ նա հետ կավելացվի Ձեր AU-ի դրամաշնորհի վրա: Այս փոփոխությունը չի կարող տեղի ունենալ ժամկետի կեսից, եթե Դուք դա չիսնդրեք: Եթե Ձեր երեխան այլևս իրավունակ չէ բացառվելու Ձեր AU-ի կանխիկ դրամաշնորհի գումարից, և Դուք ցանկանում եք ավելի շուտ նրան հետ ավելացնել, Դուք պետք է տեղեկացնեք վարչաշրջանին:

Կապվեք Ձեր CalWORKs իրավունակության աշխատակցի հետ, եթե հարցեր ունեք Ձեր CalWORKs գործի, անտեսման կանոնների կամ Ձեր AU դրամաշնորհին Ձեր երեխային հետ ավելացնելու հետ կապված փոփոխությունների վերաբերյալ: Կապվեք Ձեր Երեխայի աջակցության աշխատակցի հետ, եթե հարցեր ունեք Ձեր երեխայի աջակցության վերաբերյալ: Դուք կարող եք երեխայի աջակցության Ձեր տեղական գործակալություն զանգահարել 1-866-901-3212 հեռախոսահամարով:

CalFresh-ի փոփոխություններ.

Ձեր կանխիկ աջակցության փոփոխությունները կարող են փոխել Ձեր CalFresh նպաստները: **Դուք առանձին ծանուցում կստանաք, եթե Ձեր CalFresh նպաստները փոփոխվեն:**